ատորէն սիրոյ փորձառութիւնը ձեր ծնողաց համար : Այն ուսման հետ, այն կրթութեան հետ, զոր սիրոյ անունէք ձեր ընտանեկան յարկին տակ, ձեր ընտանեկան փառաւորանքին շուրջ. առողջութիւն, բարեկեցութիւն, բարոյականութիւն, որոնք առատ աղբիւր և ապահով գրաւականք են բարեբաստութեան, խաղաղութեան և ընտանեկան երջանկութեան : Ազատութիւնն և առողջութիւնն զաւակք են զգաստութեան և լուսոյ, այն ինչ սընապաշտութիւնն և ագիտութիւնն կը ծնանին միայն թշուառութիւն, չքաւորութիւն և հիւանդութիւնք : Հայրեր և մայրեր, ինայեցէ՛ք որ, թէ ձեր երջանկութիւնն, թէ այն էակաց երջանկութիւնն, որք ամենէն աւելի սիրելի են ձեզ և ձեր հայրենիքին են, կախուած է մի միայն կրթութեան և դաստիարակութեան տարածումէն : Դուք և ձեր զաւակներն պարտաւոր էք կատարել ընկերականութեան մէջ այն առաքելութիւնն, այն պաշտօնն, որ կը պահանջէ ամեն մարդոյ, որ սիրտ ունի, այն է տարածել և տնձեցնել իւր նմաններոյ երջանկութիւնն :

Մոնտեսքիէօ կ'ասէ. “Մի շարժառիթ կայ, որ կը քաջալերէ զմեզ ուսմամբ պարապիլ, այսինքն այն օգուտն, զոր կարող է քաղել հասարակութիւնն, որոյ անդամն եմք մեք : Կա՞յ արդեօք աւաւել քան զայս երջանիկ խորհուրդ եւ դիտաւորութիւն — թողուլ մեզմէն յետոյ մեզմէն աւելի երջանիկ մարդիկ (1)” :

Մ. Վ. Մ.

---

(1) Մարդոց ուսման կարեւորութեանն վերաբերեալ այն յօդուածն Թարգմանիչէն և ստորագրութեամբ ծնողաց և դաստիարակաց ուշադրութեանն յանձնելէն զկնի՝ սիրով շարունակեմք պատուհասեն ժամանակ առ ժամանակ, եթէ ոչ անհրաժեշտ, գէթ քաղուածոյ զանիք հրատարակել այն նիւթոյն վերայ.

# ԱՌՈՂՋԱԿԱՆ

(Շարունակութիւն և վերջ. տես թիւ 7.)

Ասանկ են հեշտախտութեան անձնատուր եղածները եւ ասանկ են այն չար ընկերները, որք անոնց հրապուրանքով ձեզ քաշել հեշտութիւններ կը խոստանան, ձեր միտքը կը գերեն, սիրտը կ'ապականեն բայց և յետոյ կը թողուն վտանգաց, փորձանաց և վերջապէս յուսահատութեան մէջ. և եթէ դժբաղդաբար անոնցա ու բարի խրատատուի մը չը պատահիք և կամ՝ լաւ օրինակ խրատներ գործադրելու ջանք չընէք, այն ատեն ձեր փրկձանը խիստ վտանգաւոր է : Ուրեմն առանց լաւ քննելու և ճանչնալու ամէն մարդու հետ սերտ մտերմութիւն և ընկերութիւն ընելէ փախչեցէք. ով որ փաղաքշանօք, քծնի խօսքերով և անհամեստ համարձակութեամբ ձեզ հետ վարուիլ կուզէ՝ անկէ բացէ 'ի բաց հեռացէք : Իսկ ընդհակառակն աշխատասէր, բարեբարոյ, անաչառ և համեստ ընկերներ, եթէ գտնէք, անգին գանձի մը պէս յարգը ճանչցէք. քանզի անոնները հազուագիւտ են :

Ինչպէս որ վատ ընկերները մարդուս հոգւոյն և մարմնոյն մահ կ'ածեն, նոյնպէս և լաւ ընկերները կեանք եւ երջանկութիւն : “Դաւառի և օդերու կենդանարար զօրութիւնը մարմնոյ ախտերը բժշկելու այնչափ չօգներ, որչափ որ բարի ընկերներու հետ կենցաղավարիլը հոգւոյ տկարացեալներու ողջութեանը կ'օժանդակէ” : Բարի ընկերներու խօսքերը, խրատները, սաստերը, յանդիմանութիւնները, պատիժներն ու հարուածները մէկ մէկ կենդանարար դեղեր են, քանզի մեր լաւութեան համար են, ուստի զանոնք սիրով ընդունելու է քան

digitised by A.R.A.R.@

թէ չարերու փոխարինանքը և հեշտութեանց գովասանքը. որք սուր են երկսայրի և թոյն են մահառու :

Զգուշոտ բարեկամ՝ միայն այն է, որ մեր բարի գործոց արդիւնք չը լինիր այլ կը խրախուսէ, անձնատուր է միշտ մեր առաքինութեանց օգնելու. անաչառ ու ահաւոր մոլութենէ և անխըջել բամբերէ հեռացնելու. զմեզ բնաւ չը շողոքորթեր. յանդիմանութիւնն անաչառ, իսկ գովեստը ճշմարիտ ու չափաւոր է. մեր գործոց մէջ կը մտնէ օգնելու և բնաւ պատճառ չը լինիր մեր յանցանքներուն. իսկ եթէ դժբաղդաբար յանցանքի մէջ իյնած տեսնէ զմեզ, կը ցաւի կը մորմոքի և ամէն կերպիւ կը փութայ կ'աշխատի զմեզ անկէ ազատելու :

Ահա այսպիսի ազնուական անձն է միայն բարեկամ՝ անուան արժանաւորը և ասանկներուն միայն կարող ենք վստահութեամբ յանձնուիլ, այսպիսիները պէտք է բարեկամ ունենալ: Իսկ ան որ անկեղծ չէ, ան որ նուաստաբար կը ցածնայ և ստութեան ու խաբէութեան կը զիջանի, նա անարժան է բարեկամութեան սուրբ անուան. նորա մէջ ամէն մոլութիւն կարող է անուղղայ կերպիւ արմատացած լինիլ. ուստի այսպիսիներէն թէ հեռանալ պէտք է, և թէ նոյն մոլութիւններէն և բարքէն զգուշանալ խորշիլ հարկ է :

Այսպէս ահա, սիրելի որդեակք իմ, կը տեսնէք որ մոլութենէ և մեղքէ ազատ մնալու գլխաւոր դարմաններէն մէկն ալ լաւ ընկերներն են. ուրեմն ձեր ամէն կամաց և հաճոյից զիջանողը բարեկամ՝ մի համարիք, այլ առաւել թշնամի : Ընտիր բարեկամը լաւ ճանչցէք և այդ սուրբ անունը միայն անոր յատկացուցէք. քանզի բարեկամին յատկութիւնն է մեզի բարի կամենալ, իսկ անկարգութիւնք եւ անհամեստութիւնք բարի չէ, ուրեմն զայն մեզի առաջնորդողներն ալ մեզի բարեկամ չեն կարող համարուիլ, ուստի նոցա հետ զգուշութեամբ վարուիլ հարկ է և ոչ անտարբերութեամբ, որով չարեաց պատճառներուն մէկէն ալ ազատ կը լինիք.

5. — Եւ վերջապէս այս ամենուն հետ մէկտեղ պէտք էք սորվիլ այն փառաց տղայական դատարկութենէ որ զձեզ քան ամենայնի կը վատթարայնէ. վասն զի դատարկութիւնք ամէն մեղաց, մանաւանդ ցանկութեան մայրն է : Մարդս բնութեան ամէն կերպով ներհակ ու վնասակար է դատարկութիւնը. եթէ զգայարանքը գործելէ դադարին, միտքը անհանգիստ չարունակ կը գործէ. թէ որ բարի եւ օգտակար խորհուրդներէ զուրկ է, անշուշտ վնասակար և չար խորհուրդներով պիտի զբաղի և գրգռելով վերջապէս խորհած չարութիւնք գործքովն ալ պիտի կատարէ. “Որովհետեւ այս չար սովոր մարդի դատարկութենէ, անհամեստ խօսքերէ եւ ամբարշտութենէ յառաջ կու գայ”: Զգայարանքն ալ չեն կարող բոլորովին դատարկ մնալ, վասն զի գործելու համար ստեղծուած են. արդ թէ միտքը և թէ զգայարանքը եթէ բարի ու օգտակար զբաղմամբ դադարին, հարկաւ չար ու վնասակար գործերու պիտի պարապին և ամբարշտութիւնք վրանին տիրապետելով պիտի լինին չարախոհ և չարագործ : Այս պատճառաւ պէտք է մարդ պզտիկ հասակէն միշտ իւր անձը օգտակար աշխատութեանց և մտածմանց մէջ կրթէ, որպէս զի չարին փորձութիւնք վրան չը տիրէ : Դատարկութիւնք այժ կաւատայ մեղաց և մոլութեանց, և կը տկարացնէ հոգին ու մարմինը. վերջուր դատար-

digitised by A.R.A.R.@

կութիւնը և ուշը յագեցող կը հանդիսանայ ամէն տեսակ փորձութեանց վերայ և կը փշրէ ցանկութեան զօրաւոր կարծուած զէնքերը ։

Աշխատութիւնը անհրաժեշտ պայմանադրութիւն է մարդու իր կեանքը պաշտպանելու և զգաստ ու առողջ ապրելու համար ։ Բարի մարդուն համար արդար ու անմեղ գործելը մտաւոր հանգամանք մի և անխուսելի հարկ մի է զոր չէ կարող առանց մեղանչելու զանց առնել ։ Բարի մարդը խաղաղ սրտիւ իր բոլոր պարտքերը անպակաս կը կատարէ որոյ հետև նաև աշխատասիրութիւնն ալ ։ Ամէն բան բարի մարդու վայելած կերպովը կը գործէ և երբեք մարդու չը վայելած գործ մի չ'ընէր ։

Որդեակք իմ, գիտցէք միշտ ծուլութիւնն ու դատարկութիւնն է որ զձեզ այդ չար ախտին կ'առաջնորդէ ։ ցանկութեան ամենավնասակար ախտը դատարկութենէ ծնունդ կ'առնու և սովորութեամբ կը սնանի եւ ձեր վերայ կը տիրապետէ ։ Եթէ անգամ մի զբաղողութեամբ այդ մոլութեան սովորիք, այնուհետեւ կարծես բնական մղմամբ ձեր ամենէն օգտակար աշխատութիւնն ալ երեսի վրայ թողլով կը դիմէք չար ցանկութեան շարժութիւնը որ և իսկ ապօրինաւոր գործադրութեամբ զարգացնել եւ ձեր այդ վնասակար կիրքը յագեցնել. բայց այդ մնհաւիթ ախտը գործադրութեամբ ոչ կը դադարի և ոչ կը յագենայ, այլ աւելի կը սաստկանայ եւ կը զայրանայ. այդ մոլութեան բնութենէն ազատ մնալու միայն դարմանն է զայն չը կատարելը կամ բնաւ չը սովորիլը ։ Քանի անգամ որ քաջութեամբ փորձութեան դիմադրելով ձեր կրից և յօժարութեանց յաղթէք եւ կամքերնիդ չը կատարէք, այնչափ ալ ցանկութիւնը կը տկարանայ եւ անոր վերայ կը յաղթանակէք. իսկ եթէ թուլութեամբ ձեր անձը թող տաք փորձութեան առջեւ, գիտցէք որ յաղթուած էք ։ Կը խաբուիք, թէ որ կարծէք թէ ուզած ատեննիդ կը յաղթէք, նա կը տիրէ ձեր վերայ և սովորութեան զօրութեամբ որ մի դուք զձեզ մոլութեան առջեւ շղթայակապ գերի մը պիտի տեսնէք ։ Այն ատեն կը նմանիք դուք անզգայ տկար շիւղի մի, որ գետին յորձանաց առջեւ ինկած՝ կը քշուի անդիմանալի, նոյնս ալեաց անդիմադրելի հարուածներուն կը մատնուի միշտ ջախջախուելով և խորտակուելով. որ ոչ ազատելու կամեցողութիւն ունի և ոչ ալ իրեն պատահող արգելքներէն կրնայ օգուտ քաղելով ազատիլ. միշտ կը փշրի և ջրոյն խռովութենէն շարունակ կը փտի ։ Այսպէս կը լինիք դուք ալ՝ թէ որ ձեր դէմ ելած արգելքներէն օգուտ չը քաղէք, ձեզ տրուած խրատներուն չանսայք, ուրիշին վնասներովը չը խրատուէք և չաշխատիք փորձութեան դէմ դնելով մերժելու և ազատելու ։

Գիտեմ, հիմա շատերնիդ պիտի ըսէք, թէ (ինչպէս կարելի է ցանկութիւնը մերժել, քանի որ շատ անգամ պատերազմելով չը կրցանք հնարք մի գտնել. կուզենք մերժել եւ ազատել, բայց չենք կրնար. անյաղթելի բռնաւորի մը պէս զմեզ շարունակ կը նեղէ և կը տանջէ) ։

Հաւանական է, որդեակք իմ, կարելի է որ դուք կուզէք մերժել, կը կամիք ազատիլ ցանկութեան բռնութենէն. բայց ձեր այդ կամեցողութիւնը խիստ անկատար է, քանզի լոկ կամեցողութիւն է. կամելուն հետ գործելը միշտ պակաս կը թողուք. կ'ուզէք հեռանալ, բայց հեռանալու համար պէտք եղածին չափ չէք աշխա-

digitised by A.R.A.R.@

ակր ։ Առաքելոյն բառերն ըստ "Տակաւին արեան թափելու չափ չը պատերազմեցաք մեղքի հակառակ կենալու համար"։ Դուք կ'ուզէք յաղթութիւնը մերժել միայն կիրքերնիդ հանգարտած ատենը, երբ գիշերն ու ապաշաւը կը տիրէ, երբ խղճերնիդ ըզձեզ կը դատապարտէ ։ Իսկ ձեր կիրքը շարժած ատեն կը թուլնայք, կը մոռնաք ամեն օրէնք ու պատուէր, կը խուլնաք խղճի ձայնին դէմ, կը թողուք ամեն դարման եւ հնարք ու զինաթափ անձնատուր կը լինիք ձեր յօժարութեան և կրից ։

Մտածեցէք, ձեր գործով ցուցած ատեն ո՞վ ըզձեզ կ'ըռնադատէ որ գործերնիդ թողուք և առանձնանաք . . . կամ զձեզ հրապուրող առարկային ետեւէն երթաք սինլքոր գերիի մը պէս. յայտնի է որ արտաքին բռնաւոր մը չը կայ. այլ բռնաւորն ալ իւր զէնքերն ալ ներքին ու բարոյական են, ձեր ներքին կիրքն է զձեզ բշողը. եւ ո՞ր մէկերնիդ այդ աղետալի վայրկեանը ձեզմէ հեռացնելու համար փոքրիկ ձիգ մի ըրիք. ո՞ր մէկերնիդ փորձեցիք թէ ինչ բանով կը տկարանայք և այն բանին աւելի հոգ տարիք. այդ բոպէին ո՞վ իւր չար խորհուրդները զսպեց եւ երկիւղածութեամբ բարի խորհուրդներով զբաղեցաւ. ո՞վ, կրկին, փոխանակ գործելէ դադրելու՝ առաւել գործելու փութաց. այդ ազատել կամեցողներէն ո՞ր մէկը դէպի մեղանչելու գացած ատեն ճանապարհը փոխեց և անանկ տեղ մի գնաց որ չը կարողանայ մեղանչել. ձեզմէ ո՞վ է այն որ հըրապուրիչ առարկայ մի տեսած ատեն գիտնալով որ ալխոյ գայթակղի, չը տեսնելու զարկաւ կամ անկէ հեռանալու ձիգ մի ըրաւ. ոչ ոք, այլ ընդհակառակն այդպէս բոպէներուն ամենքն ալ առանց ներհակաւը փախուած են ։

Կը տեսնէք ուրեմն որ այս հնարքները անկարելի և դժուարին բաներ չեն. բայց դուք սաստիկ ընելու տեղ ձեր յօժար կամօքը և ձեր խղճին ազդարարութեանը հակառակ առանց դիմադրութեան՝ մի կը փութաք, կը դիմէք ձեր կամքը կատարելու, այսինքն ձեր թշուառութիւնը գրկելու ։ Բանական և հաւատարիմ խորհրդածութեամբ մեղքի ճանապարհէն ետ դառնալու տեղ, հրճուանօք կը փութաք դէպի մեղք. այդ ցաւալի վայրկեանն անցընելու համար փոխանակ հնարք մտածելու՝ կ'աճապարէք շուտով կատարել ձեր վնասակար հաճոյքը, որպէս զի արգելք մի չը պատահի. իսկ եթէ բարեբաղդաբար երախտաւոր արգելք մ'ալ դեմերնիդ ելնէ, կը սրտմտիք և դժբաղդութիւն կը համարիք. մինչդեռ այդ արգելքը Աստուծոյ մէկ շնորհքը ճանչնալով շնորհակալութեամբ և զգուշութեամբ գործածելու պիտի աշխատէիք. բայց դուք ընդհակառակն անոր դէմ կը պատերազմիք եւ խորհուրդնիդ զբաղեցնելով կամքերնիդ կատարելու հնարք մի կը բռնաւէք. Ձեր ցանկութիւնը դրդող եւ զձեզ հրապուրող առիթներէ եւ առարկաներէ հեռանալու տեղ՝ դէպի անոնց կը դիմէք եւ շատ անգամ անձամբ կ'երթաք կը որոնէք եւ կը գտնէք, որով յօժարութեամբ կանկնիք փորձութեան մէջ, կամովին կը մեղանչէք, և յետոյ կը զղջաք եւ կը ցաւիք, եւ ասով միայն կը կարծէք թէ ազատիլ կ'ուզէք ու չէք կրնար. սխալ կարծիք . . .

Ահաւասիկ ձեր բռնած ընթացքէն յայտնի է որ դուք իսկապէս եւ ճշմարտութեամբ չէք ուզեր հեռանալ. մեղքը և մոլութիւնը ամեն բանէ աւելի կը սիրէք. քան իսկ ձեր անձէն ալ աւելի. քանզի սիրելը օգ-



digitised by A.R.A.R.@

նել եւ բարի ընել կը նշանակէ․ իսկ մեղքը ու մոլութիւնը ձեր անձին վնասակար լինելը գիտնալով՝ հանդերձ՝ զայն կը գործէք 'ի վնաս ձեր անձին և այլոց․ ուրեմն ձեր անձն անգամ սիրել չէք գիտեր․ Արդ եթէ ձեր անձին օգտակար չէք կարող լինիլ, ալ ինչ բանի օգտակար պիտի լինիք․ եթէ ձեր անձը չէք սիրեր, ալ զո՞վ կրնաք ճշմարտութեամբ սիրած լինիլ․ ձեր ամէն ուրիշ գործերը անկատար, ձեր բոլոր յօժարութիւններն ու սէրը միշտ կասկածելի և վնասակար պիտի լինին։ Քանզի սէրը բոլոր զգացմանց և ներքին շարժութեանց արմատն ու աղբիւրն է, երբ որ սէրը իւր հանգամանքներէն կը զրկուի, որ է սրբութիւնը, բարին, համեստն ու օգտակարը, և կը չարանայ․ հարկաւ բոլոր զգացումներն ու շարժութիւններն ալ իրենց աղբիւրին և արմատին մէջ կ'ապականուին, ուրկէ կը հետեւի որ աւանկ ապականեալ զգացման տէր մարդը չէ կարող հաստատուն բարի բան մի ընել․ և եթէ լաւ բան մի ալ ընէ, դիպուածական է և ոչ ուղիղ ու յօժարութեամբ․ որ եթէ առիթ ունենայ այն լաւութիւնը վատութեան կարող է փոխել․

Այսպէս ահա կը տեսնէք որ երջանկութեան պայմաններէն մին է առողջութիւնը, իսկ առողջութիւնն ալ առաքինութեամբ եւ սրբութեամբ կը ստացուի․ “Աստուծոյ օրհնաց դէմ մեղանչողը, կ'ըսէ Ս․ Գիրքը, բժշկաց ձեռքը կիյնայ”․ իմաստասէր մ'ալ կըսէ թէ․ “Անժուժկալութեամբ խախտած առողջութիւնը դեղերու շատ գործածութեամբը բոլորովին կը քանդուի և կը կործանի”։ Ուրեմն ինչպէս մինչեւ ցարդ ուզեցի սորվեցնել, այժմ խօսքս վերջացնելու ատեն անգամ մի եւս կը յիշեցնեմ ձեզ թէ առանց ժուժկալութեան և սրբութեան առողջութիւն չը լինիր, առանց առողջութեան ալ երջանկութիւն չը կայ։

Արդ դուք այս ամէնը լսելով եւ սորվելով՝ շարունակ՞ աշխատեցէք որպէս զի բնաւ գէշ բանի մը սովորութիւն չունենաք․ և դժբաղդաբար եթէ վատ բանի մ'ալ սովորութիւն կամ սիրահարութիւն ըրած էք, շուտով թողելու ջանացէք քանի որ դիւրին է․ վասն զի քանի որ կը կենէք, այնքան սովորութիւնը ձեր վերայ կը զօրանայ և յետոյ հրաժարիլը, չեմ ըսեր անհնարին, քանզի կամեցողին համար անհնարին բան չը կայ, այլ խիստ դժուար կը լինի․ Այս ցոյց տրուած դարմաններուն եւ հնարքներուն մէջ կրթեցէք ձեր անձը ամենայն յօժարութեամբ և անխափան ճշդութեամբ և այն ատեն օգտակար արդիւնքը պիտի վայելէք․

Եթէ դուք ձեր մոլութիւններէն ճշմարտութեամբ ազատիլ կամենաք, հարկ եղած ատեն այս հնարքներէն զատ դուք եւս հազարաւոր հնարքներ և դարմաններ կարող էք գտնել՝ փորձութեանց դէմ մաքառելու, ձեր անձը պաշտպանելու և չարին յաղթելու համար․ իսկ եթէ այսպէս չընէք եւ ձեր ուղղութեան ու փրկութեան համար անհոգ և անգործ մնաք, պարզ կերպով յայտնած կը լինիք որ դուք մեղասէր էք քան թէ անձնասէր, կամքերնիդ ու կիրքերնիդ կը սիրէք քան թէ ընկերնիդ, մոլութիւննիդ աւելի կը սիրէք քան թէ զԱստուած․ և ով որ ճշմարտութեամբ զԱստուած, իւր ընկերը և իւր անձը չը սիրեր, նա բնաւ բարի բան մի ճշմարտութեամբ չէ կարող սիրել․

Եթէ դուք ժուժկալութեամբ եւ ողջախոհութեամբ ապրիք և յարմար ժամանակին ամուսնական ընկերի մը հետ

digitised by A.R.A.R.@

անմահութեան արքայական կատարելը մի-անանք, եթէ այն վիճակին մէջ ալ հա-ւատարմութեան եւ խորհրդութեան օրէն-քը երկիւղածութեամբ պահպանելով ամբողջութիւնը միայն իր սուրբ նը-պատակին համար գործածէք, այն ա-տեն Աստուծոյ օրհնութիւնը կը գայ ձեր վերայ, առողջ եւ առաքինի զա-ւակներ կունենաք եւ ընտանեկան քաղց-րիկ խաղաղութիւնն ու երջանկութիւ-նը կը վայելէք սոյդ ՝սիրոյ եւ համակ-րութեան մէջ եւ յաւիտենական խա-ղացեալ հանգիստը ժառանգելու ար-ժանի կը լինիք:

Սուրբ Հոգւոյն շնորհքն ու խնա-մութիւնը մաղթելով ձեզ համար՝ կը փափաքիմ՝ ի սրտէ որ իմ այս փոքրիկ աշխատութենէ մեծամեծ օգուտներ քաղէք եւ արժանի լինիք բարի մարդ, կատարեալ քրիստոնեայ եւ ճշմարիտ որդիք Աստուծոյ կոչուելու, որով եւ կը փառաւորի Աստուած, յորմէ ամե-նայն կատարեալ բարիք եւ սուրբ փառք յաւիտեանս յաւիտենից ամէն:

Մ. Վ. Յ. Մովսէսեան:

ՅԱՒԻՏԵՆԱԿԱՆ ԿԱՄ ԲՆՈՒԹԵԱՆ
ՕՐԷՆՔ

ԱՆՍԿԻԶԲԵՆ սկիզբն առի գոյութեան,
Տիեզերաց դրաւ Աստուած զիս իշխան.
Ես զհամայնս ունիմ յանխախտ կայութեան,
Նշմարելութեան ես եմ առաջ մարդկութեան.
Ինեւ համայնք 'ի յարգ ու զարդ կերպարան.
Առանց ինձ ամէն բան է ցիր ու ցան.
Ուր ես չը կամ մահացուցիչ է անդ համայն,
Համայնք ինեւ կ՚առնին, կ՚առյին, կան ու կեան.
Եթէ կուզես դու զիս ճանաչել թէ ինչ եմ,
Քննէ գոյից բոլոր մասունքն ես անդ եմ,
Խելք խորհէ, ասա քեզմէ իսկ հեռի չեմ,
Արարիչս ալ զիս յայտնած է քեզ յանգեմ.
Ինչո՞ւ դու միշտ ինձ դէմ զինիս մարդ արուեստ,
Չէ յաղթեր ինձ բնաւ մէկը, կայ դիպուլ.
Դո՞ւն ալ կ՚առնուս իմ դէմս ջանիս, այլ շատ ուշ.
Եւ այն ատեն ունայն են զեղջք, տուգանք, տոյժ.
Խիստ քաղցր է քեզ ինձ դէմ գնել վճռութեամբ,
Բայց ես ապա ընդ քեզ լինիմ զաւնութեամբ.
Իմ նախանձական հարուածք թէպէտ խիստ մեղմ են,
Բայց երթալով կը սաստկանան 'ւ անբոյժ են.
Անկրելեաց հիւանդադիտաց ձեռք* սուտ են.
Եթէ խոյս տան թէ քու ցաւոց կը բուժեն.
Ես անողոք եւ մի անխոյս դահիճ եմ,
Բայց եւ գթոտ գործօնից ու պաշտպան եմ.
Ես մի Տիրող մեծ իշխան եմ զօրաւոր,
Ներհակողին ոյժը կ՚ընկեմ ջարդ փշուր.
Ես գթալից եմ եւ մայր գթած բնութեան,
Կը դարմանեմ անաստուածելին ինձ հլու.
Ես բնութեան մեծ օրէնքն եմ, ինձ լսէ.
Մինչեւ հիմա կերած ապտակդ հերիք է.
Շուտով գործիր խոնարհամիտ հնազանդել,
Դուցէ շահիս միւրկին ցաւերդ, ալ բաւ է.
Թէ մնաս ես ամբոխ կամաւոր հնազանդիլ,
Իշխանութեանս զաւակաւնին պատրաստ կիլ.
Զգուշացիր, ինձ դէմ բնաւ չը գործես,
Այսր թէ ոչ անշուշտ պատիժ կը քաշես.
Թէ կատարեալ մարդ ես ինձմէ ապրսպրե,
Շուտով գործիր, չըլլայ խաղաղ ուժաթափ.
Այս իմ խրատ լինի ձեզի յաւիտեան,
Արդար օրէնքն յարգեցէք միշտ սիրական.

* Բժիշկ.

ՎԵՐՋ